

որ իրեն յօգուածներն այլ եւ անուամբ կուղ-  
ղէ հրատարակելու բայց Հնդկաբնակ Հայոց ամե-  
նուն յայտնի է. որ և իցէ անուամբ հրատարա-  
կելու լինի իսկոյն կը ճանաչին թէ ազբիրը մին  
է. ծառ և պողոյ իւրմէ ճանաչի.

Աւելորդ չեմ համարիր փաքք ինչ տեղեկութիւն  
տալի զիտութիւն ձեր թէ մեկ տարի է որ Սրբ-  
րազմն Վրիգորիս արքավիճակոպան այս կողմերս  
կը գտնուի և լրագրի միջոցով այլ և այլ տ-  
նուամբ յօդուածներ հրատարակեցան Արշակուսոյ  
մէջ. Այն հրատարակութեանց առաջին և միակ  
շարժառիթն այս է. Տեղոյս ոճանց համար մահ  
էր Սրբազն Առաջնորդին Հնդկաստան գալն և  
ամենայն անձանց և հանդամանաց անգետի լինեն,  
որովհետեւ չեմ կարող՝ զինի ծանօթանալուն  
նորին Սրբազնութեան՝ իրենց գերերը խաղալ՝  
ինչպէս իրեն նախորդներն անձանօթ զոլով լրա-  
հածոյն խաղացեր են, անարժանք ի պատիւ որ-  
ժանուարը յանարդանտ որով տասն տարի առաջ  
Հնդկաստան՝ մանաւանդ Կալկաթա՝ աղջային խո-  
ռովութեանց և երկպատակութեանց ծով գոր-  
ծած էր՝ ինչպէս ցոյց կը տան նոյն թուին եղած  
այլ և այլ լողուաւ տեսրուկներ իրարու գեմ:

Ապանորդ հնարք չեմ մնաց որ ի գործ ըլդին  
տեղէս՝ ողորմելի Զուզոյու ժողովութը\*) զրդու-  
լու՝ որ թշլ չտան Առաջնորդին Զուզոյուց զարա-  
կլալու բայց Սրբազն Առաջնորդն իրեն ընա-  
ծին խօհեմատթեամբ և համելու թեամբ կոտրեց  
այն շղթայն զոր իրեն նախորդները քանից ցան-  
կացեր են կոտրելու և տեղու զալու ոցիկութիւն  
ընելու, բայց չեմ կարողացեր որով սոքա ափի-  
բերան մնացին. Եթէ Սրբազն Առաջնորդին Զու-  
զոյուց առ ժամանակ ինչ հեռանողը մած վկաս  
էր, ինչու այժմն կը յօրգորէ ժողովրդին՝ որ  
վիրագործին ժընդունին, որիշ անունով մ'ող  
Բթա խայի ժողովրդեան մը խոռովութեան սեր-  
մեր կդանէ լուելով թէ Զուզոյ ձեռքէ կերթաց  
Առաջնորդին բացակայ լինելովն, և այս առթիւ

հազար զրպարտանք և բարուրանք կը թափէ  
զուր տեղ Առաջնորդին վրայ. Եթի տեսաւ որ  
Կալկաթու ժողովուրդը որպէս հարի և արժան  
էր իրենց Սրբազն Հայրն ընդունեցան ամենայն  
պատուով, և նա այ մասպիր է Բթաւիս զնալուն  
առ աջաւց խոռովութեան որովներ կցանէ Ար թո-  
ղում հրամանքին որ որովնացանք ինչի՞ կնման-  
ցնէք. Առաջիկ այս հազար տէն է Արշալոյս լրա-  
զին այլ և այլ անուամբ թղթակիցը

Երկրորդ, միակիրպ յօդուածներ կը հրատա-  
րակէ նցն լրազրի միջոցով այս տեղի եկեղեցոյ  
կարգի կանոնի վրայ. Կերեւի որ ինքը ամենեփն  
կարգ կանոն ինչ լուել է զփառնողէն զատ, ուրիշ  
տեղերու եկեղեցեաց վրայ խոկ տեղեկութիւն չու-  
նի, և միանգամայն խաղաղութիւնն իրեն առելի  
կերեւի ևնկեղծ սրտով կըսեմ. երանի թէ մը  
կողմերու եկեղեցիներ ևս սորտ պէս կարգ կանոն  
ունենային շնորհիւ այժմէան եկեղեցպանի՝ որ է  
Մէծ. Պատմաս Մելքոնեան, աշխոյժ, եռան-  
գուն, անշահաւր որ իրաւամբ ըսելու է, ճրշ-  
մարիտ աղջանէր մէկ և խռովին ալիաց մէջ  
եղած եկեղեցին և ժողովրդով Խաղաղ Ավկանո-  
սի մէջ ձգեր է. բայց այս խաղաղութիւնն առել-  
ի է Արշալուայ թղթակիցն. բանիցս փոքք փոր-  
ձեց խախտելու զնու բայց ժողովրդեան մ. ծագոյն  
ձայնն յնու կացոյց զնաւ ամսթալիի.

Սրբազն առաջնորդը տեսանալով Պ. Եկեղեց-  
պանին ամենայն հանգամաները մի առ մի յարտ-  
նեց Պ. Եհավատ Հոյրապետին ամենայն Հայոց՝  
որ օրհնութեան և շնորհակալութեան Կրոգակ  
յու զարկեց մասնաւոր Մէծ. Պ. Եկեղեցպանին  
որպէս բորբոքեցաւ խռովայցը սիրոն ։ Զույրոյիցի-  
ունն կոչեցելոյն, և այս պատճառաւ զրուարուու-  
թիւն չմնայր որ շմափէ որդազան Խոաջնորդին վրայ.

Որով մասի. . .

Պ. Հեթեմս Առ

Ահաւասիկ Պատմութիւն. Պ. Ա. Ա. Ամառեկի  
յուղարկած նամակն, որ Արշալուայ խմբագրին  
ողջեալ էր

Յարդոյ ու բոն.

Ի 1045 թիւ սպառական օրպիրի ձերզում  
տեսաք բան ինչ զրեալ յաւմանէ տիսամուկ յ

(\*) Այս Զանքը աւելի Զուզոյէն ծնունդ տռած է  
եւ թելադրուած:

Ապկամբայէ ուսկս այցելու թեսն Գեր. Տ. Գրիգորիս Սրբազն Առաջնորդին միրոյ առ Արքայն Քրիստոյից և այն անպիսի սուտականովաս լանիւ, որ պարտ համարիմ տալ ձեզ և ընթերցողաց ձերոց զջշմարիտ պատմութիւնն անցիգն.

Այն ինչ Գեր. Սրբազնն կամէք իլանել ի Թանգառնոց ի Մանղէ, էառ ընդ իւր զՍրբակարօն Կարապետ Տ. Սրբահամ Տէր Կարապետեան վիճակառ քահանացն Թանրունոց իրքեւ ուղեկից և զիս իրքեւ թարգման լիզուին Բըրմայից

Ի լսել Սրբային զժամանումն Սրբազնին՝ առոքէ առ նա իշխան զամն մեծապատիւ հանդերձ չորիւք փողվք ի պատիւ նորաւ Սրբազնն չոզաւ յեկեղեցին մեր հանդերձ քահանայիւք և ժողովրդովք իւրովք, և յառուրն երկրորդի յայց ել իշխանաց տեղուցն ըստ սովորութեան երկրին, և յառուրն երրորդի չոզաւ ի պալատն արքունի ի տես Աթհապետին. եմուտ ի սրաշն այցելու թեան, ուր ընկալեալ լինին դեսպանք և ամենայն պատուեի անձինք ոչ բոկոտն, որպէս առէ համապատասխանին ձեր այլ ըստ որում սփսեալ կայր անդ ազնիւ խալի, անդ հանեալ զկոշիկս իւր, որպէս և օրէն է ի մէջ Պարսից և Տաճկաց, և ծննդածալ նատաւ, Երբեւ լուաւ արքայն զգալուստ նորաւ եկն առժամայն և ողջոյն նուուն իրերաց. այլ Սրբազնն նոյնակս ծնդուածալ նատեալ կայր (զի է այն առաւել պատիւ քան կանգնելն) և ոչ ի գումա անկեալ Հարցանէ նմա արքայն թէ Զիարդ կեաս որպիսի են ժուղովրդքն քո. քանի՛ են ժողովարդքն քո, և աղն. Այսոցիկ ամենից հարցմանդ պատասխանէ սրբազնն իմով միջոցաւ. և զինի սակաւուց արքայն զնաց ի սենեակ իւր, և սրբազնն վերադառ յեկեղեցին.

Ի միւսում առուր հրաիրէ զրբազանն և զքահանայս ի հացկերցյմ Զինի հաշին առքայն. \* Զինչ են խնդիրը քո առա զի կատարեցից — Առէ սրբազնն. \* Հայս երիս իրս խնդրին զի ունիցիս յարաժամ զզութ քո ի վերայ ժուղովրդան իմոյ, ինամ տարցիս քահանային տեղոյս և յետո կոչեցիս զազպապետն օտարականաց զՅովհաննէս Սարգիս Մանուկեան զոք վը-

տարեալ ես ի քաղաքէ աստիւ Ասէ աբքայն. \* Թէպէտ բազումք խնդրեցին յինէն վասն գարձին Յովհաննու, այլ ես ոչ լուսոյ ու միք, ստկացն զարդիս կատարեցից յօժարութեամք զինդիր քո, և նոյն ժամայն հրամայէ իշխանաց գրել և յետը կոչել դասացեալ Յովհաննէսն, որպէս և հասեալ իսկ է ի Մանղէ. և ապա տայ սրբազննին մի մատանի յակնթեայ, որոյ արժողութիւնն է 200 ռուփի, և ընդ նմին զերկու արծաթ տուփը (փանդանի) և ոչ թքամանն որպէս տէ համապատասխանին ձեր և 1100 ռուփիս իրքեալոց և գնալոյ ծախը:

Աստանօր արժան համարիմ երեան ածել ըզտ սիսալ մեկնութիւն զրողին վասն \* Փոաշ բառին զոր թարգմանէ Աստուած, որ չէ այդպէս, այլ նշանակի Տէր կամ Վեհաչութիւն ձեր որպէս և Անդղիացիք ասեն, \* Մի Լօրոտ, կամ Առուր Մահէսթի, և է այս այնպիսի բառ՝ զոր զաւակունք ասեն առ ծնողս իւրեանց, կրոսեր եղբարը առ երիցազյնն իւր աշակերտը առ վարժապետու իւրեանց, և ծառայք առ տեալրն, որպէս ծրաբեմ ի սմա մի հատ անդղիերէն զիր ի վերայ մեկնութեան \* փոաշ բառին, զոր թարգմանեաց Պ. Կամարատայ, որ էր բանիբուն աշակերտ Բըրմայից լիզուի և է բանակատար Բըրմայից արքային ի Թանգուն:

\* Աս ես առէ նոյն համազատասխանին ձեր թէ տուեալ և արքայն զՀ2000 ռուփիս վասն Սրբազնն Ամենազիկութիւն, որ սուտ է բոլորովինն:

Աչս այս է ծշմարիտ պատմութիւն անցիցն, զի էի ես ընդ Սրբազնին՝ իրքեւ թարգման՝ ի սկզբանէ մինչև ցվերադարձ նորին ի Մանղէ:

Ո՞չ ապաքէն բարւոք լիցի վասն համապատասխանւոյն ձերց զալ անցանել ի Մանղէ, տեսանել զվորս և զբար Բըրմայից և ուսանել զեզանակ խօսից նոցաւ և ապա համարձակել զինչ ինչ զրել և հրատարակել յօրապիր ի վերայ լեզուի և ծիսից նոցաւ:

Մնամ Զեզ խնարհ ծառայ  
Ա. Մ. ՄԱՆՈՒԿԻ

թարգման Ա. Առաջնորդին

Գրիգորիսի յարքունիս Բըրմայից.

Ի Ա. Ա. Հ. Ա. Հ.

25 Սեպտ. 1876

Մայիս թ. 1899, Հոկտ. 30.

Մելու և այտապահն լրագրում հրատարակեալ (Գրիգորիս Արքեպիսկոպոսի ի Պրմանստան եւ առ Արքայն Պրմանաց արած այցելութեան վերաբերեալ) նկարագիրը եւս ստայօդ յերիւրեալ։ պահիներէն մինն է։

### ՄԵԾ · ԲՈՒՍԻՆԵԱՆ ԷՖԷՆՏԻ

ՄԵԾ · ԲՈՒՍԻՆԵԱՆ ԷՓԷՆՏԻ ի մեծ ցաւրոլը իւր ծանօթաց և ընտանեաց երկուշարամի օր (Նոյ. 29) ուշ ատեն զրեթէ յանկարծ առ Աստուած փոխցաւ, որու գամբանական հանդէսը այսօր պիտի կատարուի Բերա նախադաշութեամբ Ա. Պատրիարք հօր։

Բուսինեան ն. Էֆէնտի սահմանադրութեան Հայոց ազգին մէջ ընդունուերուն առաջին և ջերմ հեղինակներէն մին է. բոլոր սահմանազիր յանձնաժողովոց անդամ էր. երեսփոխանութեան հատատութենէն ի վեր երեսփոխան էր առանց երբէք վարչութեան մը անգամ ըլլալու. աս յաձախ չէր ատենաբաներ Ազգ. ժողովը մէջ, սակայն երբ խօսել որոշէր՝ ամենէն աննշան կարծուած ինչիրը էն բարձրերը կը հանէր և բոլոր պարագայից շըջահայեցողութեամբը կիսուէր։

Սա եկեղեցւոյ իրաւանց ջերմ պաշտպան էր՝ առանց մազիւ չափ նախապաշարում ունենալու ինքը աստուածաբան չէր բայց եկեղեցւոյ ամենէն պարզ մէկ վճռովը ամենէն բարձր նիւթերը կը պաշտպանէր։

Էջմիածնաց դէմ կուսակցութեան անդամոց ամենուն հետ աւ բարեկամ էր բայց երբէք եջմիածնաց դէմ ըստ կատարեալ էր իւրաքանչական մինչև էն ծանր պարագան երան մէջ, այլ կը խօրհէր կը տրամադրանէր և ըստ այնմ հանդարտութեամբ կը խօսէր. մէկ հատիկ էր Խւրապական բառերուն բուն հայերէնը գտնելու մասին, այնպէս որ բժշկական բառարանին թարգմանած բառ երուն ամենամեծ մասը տար զիւտն էր. իր տարեցոյն ալ մեծ նշանակութիւն պիտի տանէ ապագային մէջ. բոլոր ձիզը կը թափէր աղբային տարեցուիր հաստատերու. աւանդութիւններ զիղջկական բառեր, բոլոր ասոնց սիրահար էր և ատոնցմէ մեծ հնութիւններ կը զրտնէր.

Սա պարզութեան և միօրինակութեան յարեալ էր, ուստի մեծ ջանք թափեց աղբային լեզուն ալ մի օրինակութեան մի վերածելու, սակայն չը յաջողելէն զատ՝ քիչ քիչ իր կարծիքները բարեփոխեց. բժիշկ էր միանդաման բանաստեղծ. այսու հանդէր օրէնսդրութեան շատ փափաքող էր. մեծ աշխատութիւններ տուաւ-

սահմանազրութեան վերջին վերաբնութեան միջոցին. իր զիմաւոր փափաքն էր թաղական մատակարարութեան ղլուխն ընդունել տալ Ազգժողովին, որով կարենար թաղերու մէջ թաղական ժողովներ հաստատուիլ.

Ըստեր կը կալծէին թէ յամառ էր իր գիտցածին վրայ բայց ընդհակառակն, երբ համոզնէր հակառակորդին փաստերուն օրինաւորութեանը վերայ վայկեան մը անգամ չը կենալով՝ իսկցն զէզ ի նոր համոզումը կը գտնար։

Իր վերջին սիմալներէն մէկն եղաւ. իր այն համոզումը թէ Հայոց ազգը քաղաքական զործ չունի բայց բուն նպատակն այն չէր այլ կուզէր որ անկէ ձեռք քաշելով՝ ազգը զատիրաբակութեան նուիրէ ինքզինքը, յորմէ քաղաքական անշուշտ կը հետեւ էր. սակայն ժամանակ չը կրցաւ ունենալ իր նպատակը որոշ կերպով բացատրելու։

Սա էր նաև ապակեզրունացման բառին հեղինակն ու այդ սկզբան ընդունուելուն ամենավերժ պաշտպանը, որու շնորհիւ զաւառներն կեղրոնին միապետական կամ բանական զրութեան ազատեցնան։

Առանց չափազանցիլու կրնանք ըսել թէ Բուսինեան Էֆէնտի այն աստիճան արժանիք ունէր. որ Խւրապայի բարձր զիտուններէ բաղկացեալ ժողովի մը մէջ եթէ գտնուելու ըլլալը՝ կրնար Հայոց ազգին պատիւ բերել. իր վարքն ու բարքը շատ ուղիղ էր. այն մարդուն մէկ ստախոսութիւնը կամ խարդախութիւնը լսուած չէ. երբէք չէր բարկանար մինչև էն ծանր պարագան երան մէջ, այլ կը խօրհէր կը տրամադրանէր և ըստ այնմ հանդարտութեամբ կը խօսէր. մէկ հատիկ էր Խւրապական բառերուն բուն հայերէնը գտնելու մասին, այնպէս որ բժշկական բառարանին թարգմանած բառ երան ամենամեծ մասը տար զիւտն էր. իր տարեցոյն ալ մեծ նշանակութիւն պիտի տանէ ապագային մէջ. բոլոր ձիզը կը թափէր աղբային տարեցուիր հաստատերու. աւանդութիւններ զիղջկական բառեր, բոլոր ասոնց սիրահար էր և ատոնցմէ մեծ հնութիւններ կը զրտնէր.

Վերջապէս Բուսինեան Էֆէնտիի մահը՝ բայն բուն նշանակութեամբ՝ մեծ կարուստ եղաւ. աղ-